ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/837 «24» 12 2024 թ.

«ՈՐՈՏ» ՍՊԸ
(ՀՎՀՀ 08263401)
ՀՀ Ք. Երևան, Ադանայի 79
էլ. հասցե՝ payvorot@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «ՈՐՈՏ» ՍՊ ընկերության միջև 26.04.2024թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/Լ-34-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում «ՈՐՈՏ» ՍՊԸ-ն Պայմանագրի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պետք է մատակարարեր թվով 8000 հատ կաշվեպանակներ, որոնցից վերջինս մատակարարել է ընդհանուր 1710 հատ կաշվեպանակներ, իսկ մնացած 6290 հատ կաշվեպանակները <<ՈՐՈՏ>> ՍՊ ընկերությունը հրաժարվել է մատակարարել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի

N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «ՈՐՈՏ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/Լ-34-1 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՈՐՈՏ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր 296684 /երկու հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ և 28664 /քսանութ հազար վեց հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 859906 /ութ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր վեց/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 573270 /հինգ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «ՈՐՈՏ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 24>> 12 2024թ.

ք.Երևան

Կատարող՝ Լ. Սահակյան
Հեռ. 010-59-60-21